ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացների տեսուչը Կաթողիկոսից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Շնորհակալ եմ ձեզանից յոբելեանական հանդէսներին մասնակցելու համար։ Օրհնում եմ ձեզ և ձեր ղեկավարութեան տակ գտնուող բարձրագոյն դասընթացները. մաղթում եմ յառաջդիմութիւն քրիստոնէական բարոյականութեան և քաղաքակրթութեան ոգով»։

—

Զօրբէչարթի, ամսիս 23-ին, ժողովարանի դահլիճում տեղի կունենայ Հայոց Ազգագրական ընկերութեան հրապարակային նիստը, ի յիշատակ հայ գրերի 1500 և տպագրութեան 400-ամեակի։ Արժ. Գարեգին վարդ. Յովսէփեանը կը դասախօսէ «Գրչութեան արւեստի և գրի զարգացումը հայոց մէջ»։

Շաբաթ, ամսիս 26-ին էլ նոյն ընկերութեան հրապարակային նիստում կը դասախօսէ Կարապետ եպիսկոպոսը՝ «Հայոց գրականութեան զարգացումը իր դասական շրջանում»։

—

Մեզ հաղորդում են, որ Ա. Վռամեանը Էջմիածնում կատարւած յոբելեանական հանդէսներին ներկայ լինելու համար Ներկայացուցիչ էր ընտրւած և «Կարնոյ երիտասարդական միութեան» կողմից։

ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

ԵՐԵՒԱՆ

Շաբաթ և կիրակի օրերը իսկական ազգային-ժողովրդական տօնի բնոյթ ստացան Երևանում և այդ երկու օրւայ շքեղ հանդէսների տպաւորութիւնը անջնջելի պիտի մնայ երևանցիների յիշողութեան մէջ։

Առաջուց ընտրւած էր յոբելեանական կազմակերպիչ յանձնաժողով փոխ-թեմակալ առաջնորդի նախագահութեամբ։ Յանձնաժողովը նախօրօք ծրագիր էր մշակել և ուղարկել էր բոլոր դպրոցներին։

Այդ ծրագրի համաձայն շաբաթ, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 10-ին Ս. Սարգիս եկեղեցում հոգեւորական դասի, քաղաքի բոլոր դպրոցների, ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ պատարագ մատուցւեց, որի ժամանակ երգում էր թեմական դպրանոցի քառաձայն խումբը։ Պատարագից յետոյ, հոգեւորականութիւնը, գլուխ ունենալով առաջնորդին, եկեղեցու բակում խուռն բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարեց գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Երեկոյեան ժամը 6—10 նոյն եկեղեցու գաւթում հրավառութիւն կար. երգում էր երգեցիկ խումբը և նւագում էր զինւորական երաժշտութիւնը, որը յատուկ այդ նպատակով հրաւիրւած էր Ալէքսանդրապոլից։

Բայց բուն հանդէսը ուշագրաւ իր շքեղութեամբ և նշանակալից իր թողած վեհ տպաւորութեամբ, տեղի ունեցաւ հետեւեալ օրը—կիրակի, հոկտեմբերի 13-ին։

Առաւօտը ժամը 9-ին թեմական դպրանոցի ամբողջ աշակերտութիւնը ուսուցիչների և հոգաբարձութեան ղեկավարութեամբ, համքարների դրօշակների և զինւորական երաժշտախմբի ուղեկցութեամբ սկսեց հանդիսաւոր երթը ս. Սարգիս եկեղեցու բակից, որը նախորդ օրւանից զարդարւած էր բազմաթիւ դրօշակներով, թարմ ծաղիկներով, Կայսեր, Կաթողիկոսների և ազգային գործիչների պատկերներով ու եղևնու ճիւղերով։

Թափորն անցաւ քաղաքի գլխաւոր փողոցով և դիմեց դէպի Գայիանեան, Հռիփսիմեան ու Մարիամեան դպրոցները, որոնք զարդարւած էին ծաղիկներով ու դրօշակներով, իսկ դպրոցների ճակատներին թարմ ճիւղերի ու ծաղիկների միջից փայլում էին Համազգային Մեծ տօնի անմոռանալի երկու հերոսների—ս. Սահակի ու Մեսրոպի պայծառ դէմքերը։ Շատ դպրոցներում պատերի վրայ եղևնու ճիւղերից ու ծաղիկներից յօրինւած էին գեղեցիկ դըրւագներ, որոնց մէջ երևում էին նոյն ճիւղերից շինւած երկու թւականները—412 և 1512։

Թափորը կանգ էր առնում իւրաքանչիւր դպրոցի առաջ, դպրոցը դիմաւորում էր եկողներին մի երգով և ոտանաւորով, որից յետոյ ինքն էլ միանում էր հանդիսաւոր երթին։ Այսպիսով ամբողջ քաղաքի հայ աշակերտ-աշակերտուհիները դասարան դասարան միմեանց յետևից շարւած դիմեցին դէպի ս. Լուսաւորիչ եկեղեցին։ Առջևից տանում էին ս. Սահակ—Մեսրոպի մեծ, շրջանակաւոր պատկերները, որից յետոյ գալիս էր իւրաքանչիւր դասարան մէկ-մէկ մեծ դրօշակով, որոնց վրայ փակցւած էին ս. Սահակի ու Մեսրոպի պատկերները և երեքական պետական-եռագոյն դրօշակներով։ Թափորը կանգ առաւ ս. Լուսաւորիչ եկեղեցու մօտ և սպասեց մինչև ս. պատարագն ու հայրապետական մաղթանքը վերջացաւ։ Պատարագիչն էր փոխ-թեմակալ Խորէն եպիսկոպոսը, որը մի քարոզ խօսեց, գովաբանելով մեծ երախտաւորների յիշատակը և յորդորելով ժողովրդին՝ այդ մեծ երախտաւորների յիշատակը յաւերժացնել իրենց գործին ու պատւին վայել ձեռնարկութեամբ։ Մաղթանքից յետոյ եկեղեցական թափորը միացաւ հանդիսաւոր երթին՝ հոգևոր դասի, երգեցիկ խմբի և դպիրների ուղեկցութեամբ. առաջնորդն զգեստաւորւած, ամպհովանու տակ հետևում էր եկեղեցական թափորին։ Երբ թափորը մտաւ Աստաֆեան փողոցը և ուղևորւեց դէպի Ս. Սարգիս, այդ փողոցը ներկայացնում էր մի խայտաբղէտ, շարժուն ծաղիկների ժապաւէն՝ արևի շողքերով ողողւած, Զինւորական, աշխարհիկ ու հոգևոր թափորները շրջապատւած հազարաւոր հանդիսատեսների հետաքրքիր ու զարմացկոտ հայեացքներով, ճիշտ որ մի գեղեցիկ տեսարան էին ներկայացնում։ Եւ հայ արհեստաւորն ու բժիշկը, մշակն ու վաճառականը մի ազգային հպարտութեամբ, ժպիտները երեսներին մէկ թափորին էին նայում, մէկ շրջապատող օտարազգիներին։ Եւ երանի թէ Երևանի հայ հասարակութիւնը այդ շքեղ հանդէսից յետոյ նոյն հպարտութիւնը կարողանայ զգալ վաղը, գործնական քայլը անելիս, Ազգային Մեծ Յոբելեանը յաւերժացնելու գործը կատարելիս....

Թափորը կանգ առաւ ս. Սարգսի և Թեմական դպրանոցի բակում, որտեղ կատարւեց գրական-երաժշտական ցերեկոյթ։ Օրւայ առթիւ խօսեց դպրանոցի տեսուչ պ. Ա. Չիլինկարեանը, ոտանաւորներ արտասանեցին աշակերտները։ Մէջ-ընդ-մէջ երգում էր դպրանոցի քառաձայն խումբը, նւագում էին աշակերտներից կազմւած երաժշտախումբը և զինւորական երաժշտութիւնը։ Հանդէսը վերջացաւ ժամը 3-ին։ Իսկ երեկոյեան ժամը 6—10 տեղի ունեցաւ նորից հրավառութիւն, որի ժամանակ նոյնպէս նւագում էր զինւորական երաժշտութիւնը։

Յոբ. Կազմակերպիչ Յանձնաժողովը պատւիրել էր տօնի առթիւ արծաթէ նշաններ, որոնք տօնի օրը ծախեցին հանդիսականներին։ Այդ նշանը ներկայացնում էր քնար, մէջը բաց գիրք, որի մի երեսին քանդակւած էին 412—1912, իսկ միւս երեսին՝ 1512—1912 թւականները։

Հանդէսը ժողովրդի վրայ չափազանց լաւ տպաւորութիւն թողեց, որը սրտագին մասնակցութիւն ունեցաւ։ Հաւաքւած ոստիկանները հազիւ էին կարողանում կարգ պահպանել, չնայելով որ նրանց օգնում էին յատուկ կարգւած կարգապահներ ևս։ Երևանը այսօր պատւով դուրս եկաւ իր պարտքից՝ յարգանքի խօսքը ասելիս իր Մեծ Ուսուցիչներին, տեսնենք վաղը նոյն Երևանը ինչպէս ցոյց կըտայ իր յարգանքի անկեղծութիւնը, գործնական թափորի շքերթին մասնակցելիս։

Մա—ր.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Շաբաթ օրը, ամսիս 13-ին, առաւօտեան ժամը 10-ից սկսեց ժողովրդի բազմութեան և աշակերտութեան շարժումը դէպի ս. Փրկիչ եկեղեցին, որտեղ պատարագից յետոյ եղաւ հանդիսաւոր հոգեհանգիստ Ս. Սահակի և Ս. Մեսրովբի համար։ Խօսեց Ն. քահ. Տէր-Նիկողոսեան տօնի առթիւ. համառօտ ներկայացրեց Ս. Սահակի և Մեսրովբի չարչարանքները հայոց տառերը գտնելու ժամանակ. խօսեց նրանց մեծ գործի նշանակութեան և հետևանքի մասին հայերիս համար։

Հոգեհանգստից յետոյ բոլոր դպրոցների աշակերտութիւնը ուսուցչական խմբերի հետ միասին ուղևորւեց դէպի ժողովրդական տունը, որտեղ տեղի ունեցաւ աշակերտութեան համար գրական առաւօտ ոտանաւորներով և երգերով. խօսեց և բացատրեց տօնի նշանակութիւնը։ Ի պատիւ տօնի, մինչև հանդիսի վերջը բոլոր խանութները փակ էին։

Հետևեալ օրը, կիրակի, առաւօտեան ժամը 9—11-ը տեղի ունեցաւ հայ և օտարազգի անձնաւորութիւնների ընդունելութիւնը. այցելողները հիւրասիրւեցին թէյով, իսկ ժամը 10-ից սկսեց քաղաքիս բոլոր դըպրոցների աշակերտ-աշակերտուհիների հանդիսաւոր երթը քաղաքի փողոցներով զինւորական նւագախմբի նւագակցութեամբ և դրօշակներով (համքարների)։ Երթը սկսեց Պուշկինեան և Պալեայեա փողոցների անկիւնից, որտեղ հաւաքւել էին քաղաքային երեք տարրական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները, անցաւ Պուշկինեանից դէպի Երևանեան, ապա Իջևան Գրուզինեան փողոցով մինչև Միխայէլեան փողոցի անկիւնը, որտեղ միացան ս. Փրկչի տղայոց դըպրոցի աշակերտութիւնն ու հայ կաթոլիկաց դպրոցի աշակերտները։ Այստեղից երթը շարունակեց Միխայէլեան փողոցով դէպի յաջորդարանի և ս. Աստուածածին եկեղեցու դուռը, որտեղ եկաւ միացաւ իր երաժշտախմբով առևտրական դպրոցի աշակերտութիւնը։ Հանդիսաւոր պատարագից և Կայսերական մաղթանքից յետոյ սկըսւեց թափորը քահանայական դասով և հոգևոր երգերով մինչև ս. Փրկիչ եկեղեցու արևմտեան դուռը որտեղ տեղի ունեցաւ հայրապետական մաղթանք. խօսեց Յ. քահ. Խաչվանքեան։ Երաժշտական խումբը նւագեց հիմնը, որից յետոյ հանդիսաւոր կերպով երթը ուղևորւեց դէպի ժողովրդական տունը։ Այստեղից աշակերտութեանը արձակեցին, իսկ ժողովուրդը մտաւ դահլիճ գրական-երաժշտական ցերեկոյթի համար։ Այստեղ խօսեց ս. Փրկչի տղայոց դպրոցի ուսուցիչ պ. Ա. Խանփալեան, կարդացւեցին տօնի նշանակութեան և Ս. Սահակ-Մեսրովբի մասին զանազան գրութիւններ Արղութեան օրիորդաց և ս. Փրկչի տղայոց դպրոցի բարձր դասարանների աշակերտ-աշակերտուհիների կողմից. արտասանեցին ոտանաւորներ տօնին պատշաճ և երգեցին տօնի վերաբերեալ երգեր։ Ցերեկոյթը վերջացաւ ժամը 4-ին։

Երեկոյեան ժամը 5-ին յաջորդարանի և ս. Աստուածածին եկեղեցու շուրջը եղաւ ժողովրդական զբօսանք. նւագում էին սազանդարներ և զինւորական երաժշտախումբը։ Զբօսանքից յետոյ ժողովրդական տանը կայացաւ ներկայացում, տօնի առթիւ, խաղացւեց «Սամուէլ» պատմական պիէսը և ցոյց տրւեցին կենդանի պատկերներ. 1) տառերի երևալը (գիւտը), 2) Ս. Սահակ և Մեսրովբ, 3) առաջին թարգմանիչներ։ Խաղում էր դերասան Ամօ-Խարազեանի խումբը։

Մանսի

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ

Ամսիս 12-ին, պատարագից յետոյ եկեղեցում տեղի ունեցաւ հոգեհանգիստ Ս. Մեսրովբի և Սահակի յիշատակին, ուր ներկայ էր ծխական և տեղիս պետական տարրական դպրոցների աշակերտութիւնը իրենց մանկավարժական կազմերով։ Պատարագին երգում էր քառաձայն խումբը ուս. Ղազարեանի ղեկավարութեամբ։ Հոգեհանգստից յետոյ ծխ. դպրոցի աւ. ուսուցիչ Վ. Աֆրիկեանը համառօտ կերպով բացատրեց տօնի նշանակութիւնը կանգ առնելով նաև մեր հին գրականութեան զանազան շրջանների բաւորութեան վրայ։ Բանախօսութեան վերջը խնդրեց հասարակութեանը ներկայ լինել դպրոցում հետևեալ օրը կայանալիք հանդիսին։

13-ին պատարագից և թափորից յետոյ, ուր ներկայ էին ծխ. դպրոցի վարչութեան կողմից հրաւիրւած միւս դպրոցների բարձր դասարանների, ինչպէս և հայոց դպրոցի IV, V և VI բաժ. աշակերտ-աշակերտուհիները իրենց ուսուցիչներով, դպրոցի հոգաբարձութեան և հոգևորականութեան ու հասարակութեան հետ դիմեցին դպրոցի բակը, ուր բացօթեայ տեղի ունեցաւ յոբելեանական հանդէսը։

Հանդէսը բացեց «Հայր մեր»-ով, որից յետոյ Վ. Աֆրիկեանը մի քանի խօսքով բացատրեց հանդիսականներին օրւայ նշանակութիւնը. այնուհետև ուս. Լ. Պետրոսեան մանրամասն կերպով ծանօթացրեց Ս. Մեսրովբի և Սահակի կենսագրութեան և նրանց անմահ գործունէութեան հետ։ Աշակերտները արտասանեցին մի քանի ոտանաւորներ, մէջ ընդ մէջ երգում էր դպրոցի երգ. խումբը և նւագում էր աշակերտական նւագախումբը զանազան գործիքների վրայ երաժշտ. ուս. Դ. Ղազարեանի ղեկավարութեամբ. բաւականին ուշագրաւ էր «Զէյթունի քայլերգ»-ը, որ երգեցիկ խմբի հետ ներդաշնակ նւագում էր նաև օրկեստրը։ Վերջնովս հանդէսը փակւեց։

Հանդէսը ընդհանրապէս անցաւ յաջող, բայց որովհետև բաղկացած էր ընդամենը ինն համարից, իր աղքատութեամբ կարծես զարմացրեց հանդիսականներին. նկատելի էր վերջիններիս դժգոհութեամբ ցրւելը, որոնք կարծես թէ տրամադրւած էին աւելի բան լսելու։ Դպրոցի վարչութիւնը օգտւելով առիթից կարող էր աւելի հանդիսաւոր կերպով և բովանդակալից ծրագրով դիմաւորել այդ մեծ օրւան։ Մի բան էլ շատ զարմանալի ու տխուր թւաց մեզ. այդ Նոր Բայազէտի հայ հասարակութեան քար անտարբերութիւնն էր դէպի այդ Մեծ Յոբելեանը։

Հ. Տէր-Յովհաննիսեան

ՇՈՒԼԱՒԵՐ

Հայ գրերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանների առթիւ, դեռ երկու շաբաթ առաջ, աւագ ուսուցիչ պ. Պետրոս Այվազեանի հրաւէրով, տեղի ունեցաւ հասարակական ժողով։ Ժողովը որոշեց. ա) աջակցել դպրոցական ֆոնդին, բ) առաջարկել, աւելի լայն ժողովում հիմք դնել դպրոցական նոր շէնքի, ազգային Մեծ Տօնը յաւերժացնելու նպատակով և գ) կիրակի, հոկտեմբերի 13-ին, ներկայ լինել հանդիսաւոր պատարագին և դպրոցում տեղի ունենալիք հանդիսին։

Հոկտեմբերի 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, ծխ. դպրոցի դահլիճում, տեղի ունեցաւ գրական-երաժշտական հանդէս, ներկայութեամբ հոգաբարձուների, մանկավարժական կազմի և մասնակցութեամբ դպրոցների աշակերտ-աշակերտուհիների։ Աւագ ուս. պ. Այվազեան խօսեց յոբելեանների առթիւ, բացատրեց սաների տօնի մեծ նշանակութիւնն ու յիշեալ սրբերի տւած գանձը, որոնց շնորհիւ ծնունդ առաւ, տարածւեց հայոց գիրն ու գրականութիւնը։ Հանդիսից յետոյ նոյն կազմով եկան եկեղեցի ներկայ լինելու հանդիսաւոր պատարագին։ Երգում էր ծխ. դպրոցի երկձայն խումբը ղեկավարութեամբ ուս. պ. Գուր. Դաւթեանի, ապա կատարեց հոգեհանգիստ, հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Հետևեալ օրը, կիրակի, նոյն եկեղեցում ներկայ էր խուռն բազմութիւն, հոգաբարձուները, ուսուցչական կազմը աշակերտ-աշակերտուհիների հետ։ Պատարագից յետոյ, հասարակութիւնը հոգևոր դասի առաջնորդութեամբ ու համքարների մասնակցութեամբ հանդիսաւոր թափորով եկաւ ծխ. դպրոց, որի բակում կատարեց հոգեհանգիստ. յետոյ բոլորը հրաւիրւեցին դպրոց, ներկայ լինելու տօների առթիւ տեղի ունենալիք հանդիսին։

Դպրոցը զարդարւած էր կանաչով ու ծաղիկներով։ Հանդէսը բացեց «Հայր մեր»-ով, որից յետոյ յոբելեանների առթիւ խօսեց աւագ ուս. պ. Այվազեանը։

Հանդէսի ծրագիրը բովանդակալից էր և անցաւ յաջող։ Երգում էր ծխ. դպրոցի երկձայն խումբը. արտասանեցին ոտանաւորներ՝ հայերէն և ռուսերէն։ Մէջ ընդ մէջ, նւագակցութեամբ տ. Հոփ. Ստեփանեանի, երգում էր պ. Դաւթեանը սոլօ։ Հանդիսի վերջում, հոգաբարձութեան նախագահ Վահան քահ. Տէր-Վարդանեան կարդաց ու բացատրեց հանդիսականներին, հոգևոր իշխանութիւնից ուղարկւած շրջաբերական թերթի բովանդակութիւնը դպրոցական ֆոնդի առթիւ. ապա առաջարկեց ընտրւած յանձնաժողովի կողմից նոր դպրոցական շէնք կառուցել։ Հասարակութիւնը սկզբունքով ընդունեց այդ կարևոր առաջարկը և որոշեց հրաւիրել այդ առթիւ աւելի լայն հասարակական ժողով խորհրդակցելու համար։ Չնայած այդ միտքը յղացել է շուլաւէրցիների մէջ մի քանի տարի առաջ, բայց այսօր միայն վերջնականապէս իր լուծումն է ստանալու շնորհիւ գիտակից անձանց, ներկայ հոգաբարձութեան և մանաւանդ տանուտէր պ. Արշակ Երիբէկեանի ջանքերի։

Չնայած մէկ ամիս առաջ դպրոցական ֆոնդի առթիւ հանգանակութիւն էր եղել, բայց այսօր ևս հանդիսի վերջում խնդիրը նորից առաջարկեց հասարակութեանը։

Սեդրակ

ՂԶԼ-ԱՐՎԱԴ

(Անդրկասպեան երկիր)

Կիրակի, ամսոյս 13-ին, տեղիս եկեղեցում հայ գրերի գիւտի և տպագրութեան Համազգային Մեծ Տօնի առթիւ պատարագ մատուցւեց, որից յետոյ հոգեհանգիստ կատարւեց ի յիշատակ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի և Թարգմանիչների։ Ներկայ էին ծխական միդասեան դպրոցի աշակերտ-աշակերտուհիները ուսուցչի հետ և քաղաքի ինտելիգենցիայի մեծագոյն մասը։ Տօնի առթիւ եղաւ պատշաճ բանախօսութիւն։

Տ. Ս.

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ

Կատարւեց համազգային մեծ տօնի հանդէսը։

Վաղ առաւօտից Թիֆլիսի հայ հասարակութիւնը ամենանւիրական ըզգացմունքներով շտապում էր իր աւագ եկեղեցին։

Ապրում էր նա այդ օրը իր նախնեաց փառքով, մտքով սլանում էր իր նախահայրերի աշխարհը, խորին ակնածութեամբ և խանդավառ կարօտով համբուրում էր նրանց սուրբ շիրիմները։

Նա եկել էր այսօր իր հարազատների հետ նորից սերտ կապերով շաղկապւելու և այդ պատմական, այդ նշանաւոր վայրկեանին ի մի ձուլւած եղբայրական ողջոյն ուղարկելու ամբողջ աշխարհին։

Եւ, իրօք, ամենայն վստահութեամբ կարելի է արձանագրել, որ հայ հասարակութիւնը այդ օրը կանգնած էր ցանկալի բարձրութեան վրայ։

Մեծ թէ փոքր, հարուստ թէ աղքատ, վաճառական թէ արհեստաւոր ու բանւոր, դպրոցի սան թէ ուսուցիչ բոլորը շտապել էին իրենց պարտքը ամենայն սրբութեամբ կատարելու։

Սակայն ցաւալի և վերին աստիճանի վհատեցուցիչ վերաբերմունք ցոյց տւին հասարակութեանը կարգադրիչ մասնաժողովի անդամները։

Չորս դռներ ունէր այդ հանդիսավայրը և չորսն էլ փակեցին ժողովրդի առաջ։

Վանքի գաւիթ մտնել կարող էր միայն հրաւիրւած մահկանացուն։ Մի պատկառելի ծերունի աղերսում էր. «Թոյլ տւէք, ես աղօթել եմ ուզում, ես ամեն կիրակի աղօթում եմ Վանքում, իմ միակ և նւիրական սրբութիւնս է այդ, ես դրանով եմ միայն ապրում, ես քրիստոնեայ եմ...»։ Բայց նա տոմսակ չունէր, և նրան ներս չթողին։

Ներսիսեան դպրոցի ցանկապատի դուռը անգամ կապել էին։ Ես ականատես էի, թէ ինչպէս կարգադրիչ մի պարոն գայրացած գոռաց մի օրիորդի վրայ, երբ սա բուռն տենչով ուզում էր գաւիթը մտնել...

Աստուած հեռու տանի թէ ինչ էր կատարւում դպրոցի դռներում։ Մի պատկառելի տիկին դիմեց կարգադրիչ հոգաբարձուին և երբ իր դիմումը անցաւ անօգուտ, սրտնեղւած և վհատւած գոչեց. «Եւ սա համարւում է կուլտուրական ազգի կուլտուրական տօն...»։

Երբ հասարակութիւնը այսպէս բուռն կերպով ձգտում է դէպի հանդէս, ղեկավարները պէտք է նրան ընդառաջ գան. Ներսիսեան դպրոցի ոչ միայն մի դահլիճը, այլ հարկաւոր էր ամբողջ շէնքը դնել հասարակութեան տրամադրութեան տակ. բոլոր դռները պէտք է անխտիր բաց լինէին և հասարակութեան առաջ։ Հանդէսը կարելի էր կատարել նաև բացօթեայ. նոյնիսկ այդ կըլինէր ամենայարմարը և ցանկալին մանաւանդ որ բուն հասարակութիւնը, որի անունից էր գրւում և խօսւում, մնաց դուրսը, ցանկապատի ետևը։

Չի կարելի համամիտ լինել թեմի առաջնորդի այն խօսքերին, որ նա ուսումնարանի դռներից, ժողովրդին հանգստացնելու համար, ասաց.—«չի հարկաւոր անպատճառ տեսնել և ներկայ լինել հանդիսին, հարկաւոր է հոգով ու սրտով զգալ»։

Հոգով ու սրտով պէտք է հասկանային ընտրեալներ, իսկ բուն ժողովուրդին, հայ հասարակութեան լայն խաւերին հարկաւոր էր ականատես անել հանդէսին, հարկաւոր էր պատմել նրանց շատ բան և շատ շօշափելի կերպով, որպէս զի նրանք սերտ կապերով կապւէին նւիրական սրբութիւնների հետ, եթէ ոչ նրանք վաղ թէ ուշ կարող են երես դարձնել...

Մ. Գ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Դիտաւորութիւն կար յոբելեանական հանդէսների առթիւ Էջմիածնում հաւաքւած պատգամաւորների խորհրդակցութեամբ ֆոնդի գործադրութեան եղանակը որոշել։ Վերադարձածների հաղորդածին նայելով, այդ խնդիրը դեռ պէտք է մամուլի և հասարակութեան մէջ արծարծւի։ Ուստի նաև ես կուզէի այս մասին կարծիքս արտայայտել։

Նկատի ունենալով մեր գիւղական դպրոցներից շատերի չքաւոր դրութիւնը, բնականաբար, հարկադրւած պէտք է լինինք նախ և առաջ այդպիսիներին բնական մահից ազատելու մտահոգութիւնն ունենալ։ 1912/13 ուսում. տարում Երևանի և Թիֆլիսի թեմում ընդամենը 200 գիւղական դպրոց կար, Շուշւայ, Շամախու և Հաշտարխանի թեմում էլ ենթադրւում է (հրատարակւած մանրամասն տեղեկութիւններ չկան) մօտաւորապէս 80 գիւղական, հետևաբար բոլոր թեմերում մօտ 280 գիւղական դպրոց կայ։ Բոլոր թեմերի մի ուսուցչով պահւող մօտ 260 դպրոցների դասատուների ռոճիկը մինչև 500 րուբլի բարձրացնելու համար՝ ի լրումն վճարւող ռոճիկների տարեկան մօտ 20 հազար րուբլի նպաստ է պահանջւում։ Համոզմունքս այն է, որ միայն այդ պայմանով փոքր ի շատէ ձեռնհաս ուսուցչական ուժեր կարելի կը լինի գիւղ գրաւել և այդ դպրոցները նորմալ դրութեան վերածել միայուն ուսուցիչներով։

Բացի այս լրացուցիչ նպաստից ֆոնդը տրամադրելի պէտք է ունենայ մի որոշ նպաստ էլ, օրինակ՝ 10 հազար րուբլի փակման վտանգի ենթարկւած դպրոցները պահպանելու համար։

Տարեկան 2—3 հազար րուբլի էլ պէտք է յատկացնել դասական պիտոյքների համար, առանց որոնց նորմալ դպրոցի մասին խօսք անել կարելի չէ։ Յայտնի է, որ մինչև հիմա միայն քաղաքներում և մի քանի մեծ գիւղերում գոյութիւն ունեցող դպրոցներում, թէև ոչ լրիւ, այնուամենայնիւ որոշ քանակութեամբ այդ պիտոյքներից կան։ Ճնշող մեծամասնութեան դասարանները սև գրատախտակից աւելի բան չունին։

Չորրորդ պահանջը մեր դպրոցական ցանցի մէջ հաւասարակշռութիւն առաջացնելն է, որ փոքր ի շատէ գլուխ կը գայ գիւղական 280 դպրոցների վրայ 140 էլ աւելացնելով, հետզհետէ իրագործելով, համապատասխան ֆոնդի միջոցներիս։

Ռուսաստանի հայութիւնը ունի այդ միջոցները, պիտի տայ արդեօք մայրենի դպրոցի պահպանման համար, այդ կը տեսնենք առաջիկայում։

Յ. Տէր-Միքաելեան

ների—վշտակիրների սուգը. նրանց ճակատագիրը ճնշում, հալածում էր ինձ։—Ինչո՞ւ ես հաշտ չէի նրանց հետ, ինչու նրանք հարազատ չէին ինձ. գէթ լինէին թշնամի և ատէին ինձ բայց անկարելի մոռացքի բաժին եմ ես նրանց վշտերի, նրանց սգի մէջ...

Եւ թող թափւեն մեհրս ինձանից, աչքերս խորանան մահւան սևով ու չոր ոսկորներովս կանգնած մնամ անապատի վայրագ հողմերի դիմաց,—միայն թէ վշտակիրների աչքերը քաղցր նայեն ինձ վրայ...

Ո՞վ ցնորք գեղեցկութիւն, ընդունիր, որպէս ապաշխարանք զղջումի, արցունքներս, որ ահա կսկծահեղ պիտի փլատակւեն կրծքիս տակ. ծածկիր քո ողորմած ձեռքով աչքերիս ամօթը, որ սիրտս չմեռնի իր կսկծի մէջ և ուղարկիր պահ մի փրկիչ քունը, որ մոռանամ անկումս, պարտութիւնս, և վերածնիր, սրբիր ինձ մեղքերիցս իմ անէութեան մէջ...

Խաւարը ոլորապտոյտ խռնւում էր հոգուս մէջ, ցցւած էի սենեակիս մէջ տեղում անշարժ և մութը ներս էր խուժում լուսամուտներից ու լցնում աչքերս... Ես լալիս էի աղի արցունքներով, լալիս էի պարտութեանս համար, որ կրեցի...

Այլևս ոչինչ չէի զգում և ոչինչ չէի տեսնում... Մի անկիւնում հազիւ սպիտակին էր տալիս բարձս և երեւացի, ընկայ նրա վրայ՝ հեկեկալով հոգուս խորքում դառնագին... Հեկեկում էի ես իմ պարտութիւնս, և նրա արցունքներն էին հոսում հոգուս մէջ...

Ա՜խ, ինչպէս չկարողացայ մոռանալ ինձ ուրիշի վշտի առաջ...

Սէյլի